ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հունիսի 2024 թվականի N 994-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 22-Ի N 437-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի մարտի 22-ի «Ընդերքօգտագործման պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու մասին» N 437-Ն որոշման (այսուհետ՝ որոշման) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) որոշման 1-ին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 3-րդ ենթակետով՝

«3) ընդերքի երկրաբանական ուսումնասիրության ընդերքօգտագործման պայմանագրի օրինակելի ձևը՝ համաձայն N 3 հավելվածի:».

2) որոշումը լրացնել N 3 հավելվածով՝ համաձայն հավելվածի.

3) որոշման N 1 հավելվածում՝

ա. 1.1-ին ենթակետում «վճարների (բնօգտագործման, բնապահպանական, շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի համալրման, մշտադիտարկումների իրականացման)» բառերը փոխարինել «բնօգտագործման, շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի համալրման, մշտադիտարկումների իրականացման վճարների և բնապահպանական հարկի» բառերով,

բ. 2.2-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել,

գ. 3.4.27-րդ, 5.4-րդ ենթակետերում «շրջակա միջավայրի պահպանության ոլորտում բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմին» բառերը փոխարինել «շրջակա միջավայրի ոլորտի պետական կառավարման լիազոր մարմին» բառերով, 3.4.29-րդ կետում «շրջակա միջավայրի պահպանության ոլորտում բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի» բառերը փոխարինել «շրջակա միջավայրի ոլորտի պետական կառավարման լիազոր մարմնի» բառերով,

դ. 3.1-ին կետի 3.1.3-րդ, 3.1.4-րդ, 3.1.5-րդ, 3.1.9-րդ, 3.1.10-րդ, 3.1.11-րդ ենթակետերը և 3.4-րդ կետի 3.4.25-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել,

ե. 3.4-րդ կետի 3.4.7-րդ ենթակետից հանել «եռամսյակային և» բառերը, 3.4.24-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«3.4.24. թույլատրել լիազոր մարմնին մուտք գործել ընդերքի ցանկացած տեղամաս երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ իրականացնելու համար՝ այդ մասին առնվազն 14 օր առաջ լիազոր մարմնի կողմից գրավոր իրազեկված լինելու դեպքում»,

զ. 5.1-ին կետի 5.1.1-ին ենթակետն ուժը կորցրած ճանաչել.

4) որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված՝ օգտակար հանածոյի արդյունահանման և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման նպատակով ընդերքօգտագործման պայմանագրի N 1 հավելվածի 11.3-րդ կետով սահմանված N 1 հավելվածում՝

ա. 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«2. Ընդերքօգտագործման ընթացքում վճարման ենթակա հարկերը, տուրքերը և այլ վճարները»,

բ. 2.1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«2.1 ընդերքօգտագործողները Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարում են ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով և չափով բնապահպանական հարկ և բնօգտագործման վճարներ (այդ թվում՝ ռոյալթի).»,

գ. 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«3. Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի համալրման (ռեկուլտիվացիոն) և մշտադիտարկումների իրականացման՝ օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման համար վճարներ»,

դ. 3-րդ կետի 3.1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«3.1 ընդերքօգտագործման ընթացքում խախտված հողերի վերականգնման համար ընդերքօգտագործողների կողմից շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի համալրման (ռեկուլտիվացիոն) վճարներ՝ ՀՀ կառավարության 2021 թվականի հոկտեմբերի 21-ի N 1733-Ն որոշմամբ սահմանված կարգով»,

ե. 3-րդ կետի 3.3-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«3.3 Ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացման համար դրամագլխից ընդերքօգտագործողին տրամադրվող գումարը չի կարող գերազանցել ընդերքօգտագործողի կատարած հատկացումների չափը».

5) որոշման NN 1 և 2 հավելվածների՝

ա. առաջին պարբերություններում «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության ընդերքի օգտագործման և պահպանության բնագավառում լիազոր մարմինը» բառերով,

բ. 6.1-ին ենթակետերում «թույլտվության» բառը փոխարինել «ընդերքօգտագործման իրավունքի» բառերով,

գ. 6.2-րդ ենթակետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«6.2 Պայմանագիրը գործում է նաև տրամադրված ընդերքօգտագործման իրավունքով սահմանված ժամկետի կամ ընդերքի տեղամասի սահմանված կարգով

փոփոխության դեպքում: Եթե ընդերքօգտագործման իրավունքի ժամկետը երկարաձգվել է տրամադրված ընդերքօգտագործման իրավունքի պայմանների փոփոխությամբ, ապա պայմանագիրը շարունակում է գործել, և կողմերի միջև կնքվում է համապատասխան համաձայնագիր՝ ժամկետի և (կամ) ընդերքօգտագործման իրավունքի պայմանների փոփոխության վերաբերյալ:»,

դ. 6.3.3-րդ ենթակետերում «թույլտվության» բառը փոխարինել «ընդերքօգտագործման իրավունքի» բառերով,

ե. 6.4-րդ ենթակետերում «թույլտվությունն» բառը փոխարինել «ընդերքօգտագործման իրավունքը» բառերով.

6) որոշման N 2 հավելվածում՝

ա. 4.4.1-ին ենթակետում «աշխատանքային» բառը փոխարինել «երկրաբանական ուսումնասիրության» բառերով,

բ. 4.4.11-րդ ենթակետում «շրջակա միջավայրի պահպանության ոլորտում բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմին» բառերը փոխարինել «շրջակա միջավայրի ոլորտի պետական կառավարման լիազոր մարմին» բառերով,

գ. 4.1-ին կետի 4.1.3-րդ, 4.1.4-րդ 4.1.5-րդ, 4.1.8-րդ և 4.1.9-րդ ենթակետերն ուժը կորցրած ճանաչել,

դ. 4.2-րդ կետի 4.2.2-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել,

ե. 4.3-րդ կետի 4.3.5-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել,

զ. 4.4-րդ կետի 4.4.8-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել,

է. 4.4-րդ կետի 4.4.9-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

27.06.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ